

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՏԻԿԻՆ ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿՅԱՆ-ՍԻՄՈՆԻ՝ ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Սադլ Բրուկ (ԱՄՆ)

Ձերմ սրտով ողջունում ենք տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնի ընտրությունը իբրև նախագահ ՀԲԸՄ-ի և Սուրբ Էջմիածնից հղում ենք Մեր օրհնությունը նորընտիր նախագահին և պատվարժան Կենտրոնական Վարչության:

Մեր օրհնությունը նաև մեծահարգ տիար Ալեքս Մանուկյանին և նրա 36 տարիների աննման վաստակին՝ իբրև ցկյանս նախագահ ձեր ազգանվեր Միության:

Մեր աղոթքն է, որ Տերը մշտապես անսասան և բարգավաճ պահպանե ՀԲԸՄ-ն իր ազգաշեն առաքելության ճանապարհին նորընտիր նախագահի իմաստուն ու եռանդուն ղեկավարության ներքո՝ նորանոր եկեղեցաշեն, կրթանվեր ու հայապաշտպան իրագործումներով:

Հղում ենք Մեր ողջույնը և օրհնությունը Կենտրոնական Վարչությանդ բոլոր մեծահոգի անդամներուն, որպեսզի ձեր նորընտիր նախագահ տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնին միշտ նեցուկ և օգնական մնաք ձեր բարի խորհուրդներով և շինարար գործակցությամբ՝ համայն հայ կյանքի մեջ բարձր պահելու համար ձեր մեծանուն Միության հեղինակությունը և համբավը:

Երկար, քաջառողջ կյանք արևով լեցուն ազգային բազմավաստակ բարերար վսեմաշուք տիար Ալեքս Մանուկյանին և անսպառ կորով ու երկնային օգնականություն ազնիվ տիկին Լուիզին՝ միշտ պայծառ պահելու բարի գործի նվիրված ձեր պատմական կազմակերպությունը՝ ի փառս ազգիս հայոց ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

Հայրապետական օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
1 սեպտեմբերի 1989 թ.